«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության զարգացման նպատակով

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Հովակիմյան

(Երևան քաղաքի Խ.Աբովյանի անվան 84 հիմնական դպրոց)

ԵՐԵՎԱՆ 2023թ.

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության զարգացման նպատակով:

Հարց՝ Ինչպե՞ս կազմակերպել համագործակցությունը գործընկերների հետ:

Հետազոտական աշխատանք

Թեմա- Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության զարգացման նպատակով

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ինչքանով կարող է ազդել ուսուցչի գործունեության արդյունավետության վրա նրանց փոխգործակցությունը

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Կրթության պահանջների անցնցում իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ կրթական համակարգում հաղթանակներն ու պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, ամեն մեկն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով սովորողի շահը: Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կարողունակությունները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար:

Խաչվող հասկացությունները՝

- Ժամանակ և տարածություն
- Մտածողություն և աժեքային համակարգ
- Ազատ և արդար միտք:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Մանկավարժություն
2. Դաստիարակություն
3. Հոգեբանություն

Բովանդակություն

Ներածություն…….. 5
1.Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ…….. 7
2. Մասնագիտական – մանկավարժական կոմպետենցիա…….. 10
Եզրակացություն……. 18
Օգտագործված գրականություն……. 19

Ներածություն

Հետազոտության կարևորությունը: Արդի ժամանակաշրջանում ավելի հաճախ է պահանջվում տարբեր բնագավառների գիտնականների ջանքերի միավորումը կրթության տեսության և պրակտիկայի առջև ծառացած բարդ խնդիրների լուծման համար: Հենց այդ առումով էլ չափազանց կարևոր է, որ կրթական գործընթացի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր սուբյեկտ հստակ պատկերացնի իր առարկայի դասավանդման առանձնահատկությունները, տեխնոլոգիաները և որոշի իր տեղն ու դերը մանկավարժական գործընթացում: Կրթության արդյունքի նոր հարացույցի ձևավորումը, նպատակների և խնդիրների փոփոխությունը կոչված են ապահովելու մարդու մուտքը սոցիալական աշխարհ, նրա սոցիալական մրցունակությունը և մասնագիտական, արդյունավետ գործունեությունը, որն էլ իր հերթին նոր պահանջներ է ներկայացնում մանկավարժներին՝ տիրապետելու մասնագիտական, հաղորդակցական, առարկայական կոմպետենցիաներին, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու մասնագիտական գործունեությանը:

Կրթական բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում ուսուցչի մասնագիտական կրթության որակի բարձրացումը, ուսուցիչ, ով արագ կհարմարվի նորամուծություններին և նորարարություններին և դրա հիման վրա ստեղծագործաբար կկատարելագործի ուսումնադաստիարակչական գործընթացը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և հասարակության կրթական պահանջմունքներին: Ուսուցչի պրոֆեսիոնալիզմի մակարդակի նկատմամբ այսօրինակ պահանջները ենթադրում են մանկավարժական բուհում մասնագիտական պրակտիկայի բովանդակության և տեխնոլոգիայի կատարելագործում, դպրոցում ուսուցչի գործունեության կազմակերպման հոգեբանամանկավարժական և գիտամեթոդական կառուցվածքի որակական փոփոխություն, ինքնակրթության և ինքնազարգացման նախագծում և դրա իրացման պայմանների ապահովում: Այս համատեքստում ուսուցչի մասնագիտական կատարելագործումը չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում: Այժմ ուսուցիչների մանկավարժական մասնագիտական գործունեության կատարելագործման հարցի վերաբերյալ կան մի շարք տեսական մոտեցումներ,

որոնք հիմք են ծառայում նրանց կողմից դասավանդման արվեստի գիտական հիմունքների յուրացման և մասնագիտական կայացման համար:

Այս տեսանկյունից առաջնային է դառնում նաև մասնագիտական կրթության տեսության և մեթոդիկայի ուղղությամբ մանկավարժական այնպիսի հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն սկսնակ ուսուցիչների մասնագիտական կայացմանը, մանկավարժական վարպետության ձևավորմանը, նրանց կողմից դասավանդման հիմունքների, ուսուցման սկզբունքների և օրինաչափությունների յուրացմանը, կրթական նոր տեխնոլոգիաների մշակման գործընթացին նրանց մասնակցությանը, որի շնորհիվ էապես կբարձրանա ուսման որակը:

Մեր հետազոտության թեմայի ընտրությունը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետության ապահովման արդի ժամանակաշրջանի հրամայականով:

Թեմայի հետազոտության նպատակը և խնդիրը: Հետազոտության նպատակն է ընդգծել ուսուցչների արդյունավետ փոխգործակցության կարևորությունը ուսումնական գործընթացն էլ ավելի որակյալ ու հասանելի դարձնելու առումով:

Հետազոտության խնդիրն է բացահայտել այն արդյունավետ եղանակներն, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչների միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել կրթական համակարգը, իսկ առական՝ ուսուցիչների մասնագիտական գիտելիքների կատարելագործման հնարավորությունը գործընկերների հետ փոխգործակցության համատեքստում:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

1. Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ

Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ մեծացել է նաև սովորողների հետաքրքրությունների շրջանակը: Սովորողի բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումը դժվար է պատկերացնել առանց միջառարկայական կապերի օգտագործման,առանց սովորողների հետաքրքրությունների բարձրացման: Ուստի այսօրվա կրթական համագարգում անչափ կարևորվում է միջառարկայական կապերի տեղն ու դերը : Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է: Հետևաբար, սովորողներին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունեն վերջիններիս աշխարհաճանաչողության համար:

Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ակամա դրանք կարող են դասի պրոցեսի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլանի վրա, դարձնել անկարևոր, ուստի այս գործընթացում անչափ կարևոր է ուսուցիչների կշռադատված ու նպատակաուղղված համագործակցությունը:

Ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի ապարդյունավետ: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը:

Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ:

Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության

ճիշտ կազմակերպումը, քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը:

Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրնել գտնելու կարողությունները: Նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

• ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը;

• համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը;

• ինտեգրման ձևը;

• միավորվող նյութերի միջև կապերի բնույթը

• նյութի հաջորդականության կառուցվածքը

• նյութի ներկայացման միջոցները;

• դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև

• տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝

մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, երկրաչափություն, կերպարվեստ, ֆիզիկա առարկաների միջև: Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում: Այստեղ կրկին պետք է կարևորենք ուսուցիչների փոխգործակցությունը, մի նպատակի համար կոլեկտիվ աշխատանքը :

2.Մասնագիտական – մանկավարժական կոմպետենցիա

Վերջին ժամանակներում մանկավարժական գիտության մեջ և մասնագիտական կրթության ոլորտում մեծ տարածում և կիրառություն են գտել «մասնագիտական կոմպետենտություն» և «մանկավարժական կոմպետենցիաներ» հասկացությունները:

Կոմպետենտություն (կարողունակություն) հասկացությունն ունի լատինական ծագում, competo նշանակում է հասնում եմ, ձգտում եմ, համապատասխանում եմ: Ս.Ի. Օժեգովի բառարանում կոմպետենտը մեկնաբանվում է որպես «որևէ ոլորտում գիտակ, բանիմաց, տեղեկացված, իսկ կոմպետենցիան՝ հարցերի ամբողջություն, որոնցում ինչ-որ մեկը լավ տեղեկացված է»:[1]

Կրթական չափորոշիչների օրինակի վրա ներկայացնելով՝ կարելի է ասել, որ կոմպետենցիաները «կրթության բովանդակության մինիմումն են», իսկ կոմպետենտությունը՝ «շրջանավարտներին ներկայացվող պահանջները»: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կոմպետենցիաները կոմպետենտության բովանդակությունն են, իսկ կոմպետենտությունը՝ կրթության վերջնաարդյունքը՝ անձի կարողունակությունը:

Կոմպետենտությունը մասնագիտական-մանկավարժական գործունեության տեսանկյունից մեկնաբանվում է որպես տեսական գիտելքները, գործնական կարողությունները և մասնագիտական որակները միավորող մի ամբողջական երևույթ, մասնագիտական կարողունակություն:

Յուրաքանչյուր կոմպետենցիա բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- ճանաչողական ոլորտ՝ գիտելիքներ,
- դրդապատճառային ոլորտ՝ կոմպետենցիաների արտահայտման պատրաստություն,
- արժեքաիմաստային ոլորտ՝ կոմպետենցիաների բովանդակության նկատմամբ վերաբերմունք,
- վարքագծային ոլորտ՝ տարբեր իրավիճակներում կոմպետենցիաների դրսևորման փորձ:

Այսպիսով՝ կոմպետենտության հիմքում ոչ միայն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են այլ նաև՝ ուսուցման արդյունքները,

[1] Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014, էջ 55

արժեհամակարգը, դրդապատճառային, վարքագծային, սոցիալական բաղկացուցիչները[2]:

Սակայն պետք է նշել, որ կան հետազոտողներ, որոնք կոմպետենտությունը չեն կապում որոշակի գիտելիքների և կարողությունների հետ, քանի որ գիտելիքները, կարողությունները ժամանակի ընթացքում՝ մշակույթի, գիտության զարգացմանը, հասարակական գիտակցության փոփոխությանը զուգընթաց հնանում են, կորցնում են իրենց արդիականությունը: Կոմպետենտությունը ներկայանում է որպես մանկավարժական գործունեության ընթացքում ցուցաբերած մասնագիտական և անձնային բաղադրիչների ամբողջություն՝ անձնային որակների գերակայությամբ: Անձնային որակների շարքում նշվում են ինքնուրույնությունը, հաղորդակցվելու ունակությունը, ճշտապահությունը, ինքնազարգացման ձգտումը, որոշակի աշխատանքային պայմաններում հարմարվելու կարողությունը:

Մասնագիտական կոմպետենտությունը ավելի լայն է հասկանում և առաջարկում է նրա բաղադրամասերի հետևյալ դասակարգումը.

- մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ,
- մասնագիտական խնդիրներն ինքնուրույն ստեղծագործական լուծելու ձգտում և ունակություն,
- մարդկանց հետ աշխատելու, համագործակցելու հոգեբանական և սոցիալ-հոգեբանական պատրաստություն,
- բարոյագաղափարական հասունություն և շփման, հաղորդակցման մշակույթ:

Մասնագիտական կոմպետենտությունը ենթադրում է՝

- Որակավորման բարձր մակարդակ,
- Տվյալ ոլորտում գործելու իրավասություն,
- Մասնագետի կրթվածության մակարդակ,
- Կատարողական վարպետություն,
- Ընդհանուր-մշակութային կոմպետենտության բաղադրամաս:

Մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության բաղադրամասերն են.

[2] Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014, էջ 58

- Ոչ միայն հարուստ և լայն առարկայական գիտելիքներ, այլ նաև տեսական գիտելիքներ մանկավարժությունից, հոգեբանությունից և այլ գիտություններից,
- սովորողների և գործընկերների հետ հաղորդակցվելու և համագործակցելու կարողություններ և ունակություններ,
- դիմացինին գնահատելու, արժեվորելու ունակություններ,
- անձնային և մասնագիտական որակների առկայություն:

Առանձնացվում է ուսուցչի մասնագիտական հետևյալ առանցքային կոմպետենցիաները՝

- առարկայական-մեթոդական,
- հոգեբանամանկավարժական,
- ճանաչողական,
- սոցիալ-մշակութային,
- հանրամշակութային,
- գիտահետազոտական,
- հաղորդակցական,
- կառավարման,
- տեղեկատվական-տեխնոլոգիական,
- խոսքային-լեզվական,
- նախաձեռնողական-կազմակերպական և այլն:

Մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության կարևոր բաղադրիչ է նաև ռեֆլեքսիան: Ռեֆլեքսիան անձի ներհոգեկան ակտերի և վիճակների ինքնաճանաչման գործընթացն է: Դա մարդու գործունեությունն է, որն ուղղված է սեփական գործողությունների, ներքին վիճակների, զգացմունքների, ապրումների իմաստավորմանը, վերլուծությանը և համապատասխան եզրահանգումների կատարմանը: Որպեսզի մարդը կարողանա հասկանալ ինքն իրեն, վերահսկի և կարգավորի սեփական գործողությունները, զարգացնի իր ներաշխարհը, նա պետք է ունենա ռեֆլեքսիվության զարգացման բարձր մակարդակ:

Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունենք, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր-բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման

իրականացանը: Չմոռանանք, որ ուսուցման այս տեսակը կարելի է համարել հաջողված միայն մանկավարժական առողջ համագործակցության արդյունքում:

Նշվում է, որ ուսուցչի մասնագիտական, մեթոդական կատարելագործման հիմնախնդրի արմատները գնում են դեպի վաղնջական ժամանակները: Դիտարկված են հիմնախնդրի վերաբերյալ հայ և արտերկրի մեծ մտածողների, մանկավարժ-գիտնականների, հոգեբանների տեսական մոտեցումները: Ելնելով ուսուցչի մասնագիտական զարգացման, ինքնակատարելագործման հոգեբանամանկավարժական տեսական դրույթներից և գիտական հիմնավորումներից՝ մենք ուսուցչի մանկավարժական գործունեության կատարելագործումը դիտարկում ենք որպես անընդհատ գործընթաց հետևյալ փուլերով.

· Դրդապատճառային-նպատակային: Այս փուլում ձևավորվում են ուսուցչի մանկավարժական գործունեություն իրականացնելու պահանջմունք և դրական դրդապատճառ, որոնք նրան մղում են համապատասխան արժեքների յուրացման, սուբյեկտային դիրքորոշման ապահովման, մանկավարժական գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման: Արդյունքը լինում է մանկավարժական գործունեության դրական դրդապատճառների ձևավորումը և մասնագիտական զարգացմանն անձնային իմաստ հաղորդելը:

· Մասնագիտական գործունեության կատարելագործման բովանդակության և համագործակցության ծրագրի մշակման փուլում իրականանում են մանկավարժական գործունեության հիմունքների, նորմերի, արժեքների յուրացումը: Արդյունքը մանկավարժական հաղորդակցման միջոցներին, դասի կառավարման սկզբունքներին, գործառույթներին տիրապետումն է, ինքնառեֆլեքսիայի, ինքնագնահատման կարողությունների և կոմպետենցիաների ձևավորումը: Իմիջի մասնագիտական «Ես»-հայեցակարգի գիտակցման և յուրացման փուլում ընթանում է ուսուցչի մանկավարժական իմիջի դրդապատճառային, ճանաչողական, գործունային, հուզական, մանկավարժական մշակույթի և մասնագիտական «Ես-հայեցակարգի» ձևավորումը:

· Կազմակերպչական տեխնոլոգիական փուլում ընթանում են մանկավարժական գործունեության կատարելագործման նոր ձևերի ու մեթոդների որոնում, գործունեության ռեֆլեքսիայի իրականացման կարողությունների, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորում:

· Գործունեության վերլուծության և արդյունքների գնահատման փուլ: Արդյունքը մանկավարժական մասնագիտական գործունեության և մանկավարժական տեխնիկայի կատարելագործումն է, ուսուցչի մասնագիտական անհատականության ձևավորումը և կայացումը:

Այսինքն՝ մենք մանկավարժական գործունեությունը համարում ենք ուսուցչի միասնականացված որակների և դրդապատճառային - նպատակային, մտածողական, գործունային, կազմակերպչական-տեխնոլոգիական, հուզական-գնահատող բաղադրիչների ամբողջություն:

Հիմնավորվում է, որ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ինովացիաների արդի պայմաններում ուսուցիչների մասնագիտական զարգացման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության կատարելագործման յուրահատկությունը պայմանավորված է ժամանակակից սոցիալմշակութային դինամիկ իրավիճակով, ուսուցչի մասնագիտական դիրքորոշմամբ և հասարակության զարգացման մեջ իր դերի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ:

Հիմք ունենալով այս յուրահատկությունը՝ կարելի է առանձնացնել ուսուցչի մասնագիտական դիրքորոշումները՝ ուսուցիչ-մասնագետ, ուսուցիչպրոֆեսիոնալ, ուսուցիչ-դաստիարակ: Մասնագիտական դիրքորոշումները՝ որպես անհատական դինամիկ որակներ, ինտեգրում են ուսուցչի գիտակցական ուղղվածությունը, պրոֆեսիոնալ վարքը, անձնային և մասնագիտական արժեքները: Դրանք անմիջականորեն կապված են ուսուցչի անհատական մանկավարժական և մեթոդական մշակույթի զարգացման մակարդակի հետ և համարվում են նրա մանկավարժական արդյունավետ գործունեության գրավականը: Ներկայացված են այն կոմպետենցիաները, որոնց պետք է տիրապետի ուսուցիչը մասնագիտական պատրաստության, մանկավարժական գործունեության և վերապատրաստման արդյունքում: [3]

Մենք կարծում ենք, որ ուսուցչի գործունեության մասնագիտական արդյունավետության խթանիչներ են՝

· ուսուցչի կազմակերպչական և ստեղծագործական ընդունակությունների զարգացման մակարդակը,

· ինքնուրույնությունը,

· դպրոցում ստեղծագործական-կրթական միջավայրի առկայությունը,

[3] Ղույումչյան Գ., Մանկավարժություն, երկու գրքով: 2-րդ գիրք, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 133

· ուսուցչի կողմից առաջարկվող նորամուծությունների արժևորումը և ներդրման հնարավորությունների ապահովումը,

· ուսուցչի աշխատանքի գնահատումը և նրա մասնագիտական աճի հնարավորությունների ապահովումը դպրոցի կառավարման սուբյեկտների կողմից:

Հիմնավորվում է, որ ուսուցչի մանկավարժական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական վարպետությամբ, որի ձևավորումն սկսվում է բուհում և շարունակվում դպրոցում մանկավարժական բազմամյա գործունեության ընթացքում: Աներկբա է, որ ուսուցիչների մանկավարժական վարպետության կատարելագործման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական միջոցը դպրոցում կազմակերպվող աշխատանքներն են:

Մեթոդական մասնախմբերի խնդիրն է գործընկերների հետ փոխգործակցության միջոցով օգնել ուսուցչին՝ հաղթահարելու դժվարությունները, միջանձնային հարաբերություններում ծագած խնդիրները, մշակել ինքնակրթության ծրագիր, ապահովել մանկավարժական առաջավոր փորձի փոխանցումը£

Բացահայտված են դպրոցում սկսնակ ուսուցչի աշխատանքում առկա թերությունները: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ թերություններ առկա են ինչպես ուսուցչի գործունեության, այնպես էլ մասնագիտական պատրաստության և վարքի դրդապատճառների մեջ: Օրինակ՝ գործունեության ոլորտում դրսևորվող թերություններից են՝

· դասի կազմակերպման միօրինակությունը,

· աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում չցուցաբերելը,

· աշակերտների ակտիվությունը չխթանելը,

· մանկավարժական տակտի պակասը,

· իր մասնագիտության նկատմամբ հարգանքի պակասը,

· իր մասնագիտական գործունեության նկատմամբ ոչ բավականաչափ հետաքրքրությունը,

· ուսուցման գործընթացի կազմակերպման հոգեբանամանկավարժական պահանջներին չտիրապետելը,

· ուսուցման և դաստիարակության նորագույն տեխնոլոգիաներին չտիրապետելը, որի պատճառով նվազում է սովորողների հետա- քրքրությունն առարկայի նկատմամբ,

· ուսուցչի ինքնատիրապետման և ինքնառեֆլեքսիայի ցածր մակարդակը,

· հումորի զգացման պակասը:

Այդ թերությունների վերացման համար մենք նախանշել ենք մի շարք ուղիներ՝

1. ուսուցչի ստեղծագործական գործունեության խթանում,

2. դասի կառուցվածքի համապատասխանեցումը սովորողների ուսումնա- ռության նպատակներին,

3. սովորողների համար հարմարավետ կրթական միջավայրի ստեղծում,

4. ուսուցչի և աշակերտի համակառավարման ապահովում դասագործընթացում:

Դիտարկված են ժամանակակից դպրոցում ուսուցչի մասնագիտական կայացմանը նպաստող գործոնները, մասնավորապես առարկայական մեթոդական մասնախմբերի գործունեությունը, որի հիմնական ուղղությունները պետք է լինեն՝

· մանկավարժական նոր տեխնոլոգիաների փորձաքննությունը և փորձարկումը, տեղեկատվական տարբեր միջոցների կիրառումը,

· սովորողների ուսումնահիմացական գործունեության կազմակերպման ինովացիոն ձևերի ներդնումը,

· ուսուցիչների՝ միմյանց և աշակերտների հետ փոխգործակցության կազմակերպումն ինովացիոն գործունեության շրջանակներում,

· դպրոցում կրթական ծրագրերի, մեթոդական ապահովման կատարելագործումը,

· ուսուցիչների մանկավարժական վարպետության ձևավորումը, մասնագիտական զարգացումը և կայացումը,

· կրթության որակի ապահովումը:

Այս ուղղություններից ելնելով՝ մենք համարում ենք ուսուցիչների հետ տարվող աշխատանքների նախագծումը, դասալսումները, ցուցադրական դասերը, սեմինար պարապմունքները, մանկավարժական ընթերցումները, որոնք մենք համարում ենք առաջավոր փորձի տարածման լավագույն միջոցներ:

Եզրակացություն

Գաղտնիք չէ, որ սկսնակ ուսուցիչները շատ հաճախ են դիմում աշխատանքային մեծ փորձ ունեցող ուսուցիչներին մեթոդական օգնություն ստանալու համար: Սակայն այսօր պահանջվում է ոչ թե մենթորության միջոցով մեթոդական փորձի ուղղակի փոխանցում, այլ անհրաժեշտ կոմպետենցիաների յուրացում՝ հենվելով մարդակենտրոն կողմնորոշման վրա, որը կարող է իրականացվել միայն հետբուհական մանկավարժական կրթության ընթացքում: Այնուհանդերձ մանկավարժագիտության մեջ տակավին ոչ լիարժեք են ուսումնասիրված դպրոցում ուսուցիչների մասնագիտական կատարելագործման մի շարք տեսանկյուններ՝

· ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման գիտամեթոդական, հոգեբանամանկավարժական և տեխնոլոգիական կողմերի ապահովման հիմնախնդիրը,

· ուսուցիչիների ստեղծագործական ներուժի ակտիվացման, ինքնիրացման և ինքնազարգացման համար պայմանների ստեղծման հիմնախնդիրը:

Անշուշտ, նշված հիմնախնդիրների լուծման հաջողությունը պայմանավորված է բուհում ապագա ուսուցիչների պատրաստման և դպրոցում նրանց մասնագիտական կատարելագործման արդյունավետությամբ: Սակայն, մեր կարծիքով, դպրոցի զարգացման կառավարման ապահովման համար հրատապ է դառնում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման այնպիսի տեխնոլոգիաների ներդրումը, որոնք հնարավորություն կտան բարձրացնելու ուսուցչի մասնագիտական գործունեության որակը և կատարելագործելու մանկավարժական վարպետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ֆոն, 2011, էջ 132
2. Ղույումչյան Գ., Մանկավարժություն, երկու գրքով: 2-րդ գիրք, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 133
3. Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014